Թիվ 12736935 կատարողական վարույթով գնային առաջարկ

2026-11-24 11:23:22

Հայտատու	Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	«Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77 հոդվածի 4-րդ մաս

«Կրեդիտ Կոմպրոմիս ՓԲԸ» արբիտրաժային տրիբունալի կողմից տրված թիվ 004/07/24 կատարման ենթակա ակտի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնում 01.11.2024թ. հարուցվել է թիվ 12736935 կատարողական վարույթը։
Կատարողական վարույթով պետք է՝ Ալբերտ Անդրանիկի Տաշչյանից «Արդշինբանկ» ՓՀ -ի օգտին բռնագանձել 972433.5 ՀՀ Դրամ և հաշվեգրվող տոկոսներ, ինչպես նաև կատարողական գործողությունների կատարման ծախսի գումար:
Կատարողական վարույթի շրջանակում արգելադրվել է Ալբերտ Տաշչյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզ ք. Արմավիր Բաղրամյան Գ թաղամաս թիվ 109 հասցեում գտնվող վկայականի համար՝ 2451320 անշարժ գույքը, որը ենթակա է հարկադիր իրացման։
Տեղեկացնում ենք, որ
«Կատարողական վարույթի մասին» օրենքի 77 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝
4. Անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելու նպատակով հարկադիր կատարողը նշանակում է փորձագետ, եթե՝
(...)
2) այդ մասին մինչև գույքի հարկադիր իրացման որոշում կայացնելը միջնորդել է կատարողական վարույթի մասնակիցը՝ պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե վերջինս անհրաժեշտ ծախսերի՝ (որը կազմում է 13.020 ՀՀ դրամ) գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի թիվ 900333829019 դեպոզիտ հաշվին։
Որպես տվյալ գույքի սեփականատեր տեղեկացնում ենք Ձեզ, որ սույն ծանուցումը հանձնվելու հաջորդ օրվանից 2 շաբաթվա ընթացքում իրավունք ունեք միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին՝ գույքի շուկայական արժեքը պարզելու նպատակով փորձաքննություն նշանակելու համար, պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և

եթե անհրաժեշտ ծախսերի գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարեք Ծառայության (համապատասխան ստորաբաժանման) դեպոզիտ հաշվին։
Միջնորդության բացակայության պարագայում, ՀՀ Արմավիրի մարզ ք. Արմավիր Բաղրամյան Գ թաղամաս թիվ 109 հասցեում գտնվող վկայականի համար՝ 2451320 անշարժ գույքը հարկադիր աճուրդի է ներկայացվելու կադաստրային արժեքի՝ 488.400 ՀՀ դրամի 80%-ի չափով, որը կազմում է 390.720 ՀՀ դրամ

12736935.pdf

37460713514

armavir@harkadir.am

ԱՋԱՓՆՅԱԿ ՀԱԼԱԲՅԱՆ Փ. 41Ա